# Լ Ր Ա Ց Ո Ւ Ց Ի Չ   Օ Ր Ա Կ Ա Ր Գ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նիստի (№ 8)**

23 հունիսի 2017թ. ժամը՝ 15⁰⁰

1. «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի լաբորատոր փորձարկումներ» ծրագրի մասին:
(Արմինա Դարբինյան)

2. «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Լսողության խնդիրներ ունեցող անձանց աջակցության տրամադրում» ծրագրի մասին:
(Սպարտակ Ղազարյան)

3. ԱՄՆ-ի «Ամերիկյան համալսարան» կորպորացիայի կողմից «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամին ուսումնական նոր՝ «Փարամազ Ավետիսյան» մասնաշենքի անհատույց ժամանակավոր օգտագործման հանձնում» ծրագրի մասին:
(Աշոտ Ղազարյան)

4. ԱՄՆ-ի «Ամերիկյան համալսարան» կորպորացիայի կողմից «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամին անշարժ գույքի անհատույց ժամանակավոր օգտագործման հանձնում » ծրագրի մասին:
(Աշոտ Ղազարյան)

5. Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Հայաստանի չորս մարզերում սննդային աջակցություն» ծրագրի մասին:
(Աննա Եղիազարյան)

6. «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին գորգերի նվիրատվություն» ծրագրի մասին:
(Աշոտ Վարոսյան)

## 7. Բարեգործական բեռների ներմուծման և բաշխման մասին
(Արման Բարխուդարյան)

7.1 «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

7.2 Հայ օգնության ֆոնդի· Հայաստանի մասնաճյուղի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

7.3 «Ֆոքըս օն չիլդրեն նաու, ինկ» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռի ներմուծման և բաշխման ծրագրի մասին:

7.4 «Նարեկացի» արվեստի միավորում» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

7.5 «Սատար» հաշմանդամների հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռների ներմուծման ծրագրի մասին:



7.6 «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում բեռի ներմուծման ծրագրի մասին:

7.7 «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում բեռի ներմուծման ծրագրի մասին (**N 1**):

7.8 «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

7.9 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի մարտի 31-ի N Մ-273-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին **N 1** (Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ):

7.10 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 19-ի N Մ-648-Ա որոշմամբ հաստատված ծրագրում լրացում կատարելու և նույն ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին («Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ՝ «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի հետ համատեղ):

## 8. Հաստատված բարեգործական ծրագրերին հարակից գործարքների մասին
(Արման Բարխուդարյան)

8.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի N Մ-126-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տաշիր» բարեգործական հիմնադրամ):

8.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 19-ի N Մ-648-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին **N 1** («Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ՝ «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի հետ համատեղ):

8.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 4-ի N Մ-1291-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին **N 1** («Տաշիր» բարեգործական հիմնադրամ):

8.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 2-ի N Մ-792-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Հայկական կարմիր խաչի ընկերություն):

8.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի N Մ-280-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Հայաստանի մանուկների հիմնադրամ):

8.6 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-086-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամ):

8.7 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1269-Ա որոշման և որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու և նույն որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ):

8.8 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 27-ի N Մ-1264-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամ):

9. Այլ հարցեր

9.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-820-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգելու մասին («Հայաստան» համահայկական հիմնադրամ):

9.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 21-ի N Մ-296-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին (Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի Բուսաբանության ինստիտուտի):

9.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 2-ի N Մ-455-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին («Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» ՓԲԸ):

9.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 8-ի N Մ-508-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին («Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն):

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**հունիսի 2017 թվականի N Մ - - Ա**
**քաղ. Երևան**

Ար. 3/2

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՎԱՐԴԵՆԻՍ- ՄԱՐՏԱԿԵՐՏ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի -ի N 01.1/14-1/ -17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի -ի N 02/14/ -17, Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 2017 թվականի -ի N ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հունիսի -ի N 06/3-8/ -17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 3,741,585 դրամ ընդհանուր արժողությամբ «Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի լաբորատոր փորձարկումներ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01506808) 2017 թվականի հունիսի 12-ին կնքված N Ֆ-Ա-01/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի 104 կմ երկարությամբ հատվածի լաբորատոր փորձարկումներ՝ 3,741,585 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«16» հունիսի 2017թ.

**«Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի լաբորատոր փորձարկումներ»**

**ԾՐԱԳԻՐ**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Օժանդակել Վարդենիսից Մարտակերտ տանող 104 կմ երկարությամբ ավտոճանապարհի կառուցմանը |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարերարը | Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ , ԱՀ, ճանապարհաշինության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 3.741.585,00 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի և Արցախի Հանրապետության բնակչությունը |

Ար. 3/1

| | | |
|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017թ. հունիսի 12 -ից մինչեւ 2017թ. հոկտեմբերի 30-ը: |
| 9. | Միջոցառումների ճշգրտությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2017թ. հունիսի 12 -ից մինչեւ 2017թ. հոկտեմբերի 30-ը կատարվող ավտոճանապարհի լաբորատոր փորձարկումների իրականացում: Արժեքը՝ 3.741.585,00 դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներդրվող) ապրանքների և ծառայությունների հստակ նկարագիրը, նախատեսվող քանակը և գինը | «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված տեխնիկական առաջադրանքի թիվ 1 հավելվածի անվանումների համաձայն Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի երկարությամբ կատարվող 104 կմ լաբորատոր փորձարկումների իրականացում՝ 3.741.585,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ՀՀ Կառավարության հետ |
| 12. | Ծրագրի արդյունավետության գնահատման չափորոշիչները, վերահսկողության մեխանիզմները | Արդյունավետության գնահատումը իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (տեսանյութերի և ամփոփ հաշվետվությունների): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

ԱՐ. 2/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

ԱՐ. 8/1

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

01.1/14-2/11186-17
21.06.17

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
16.06.2017թ. N 15/15.1/14092-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի լաբորատոր փորձարկումներ» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Սարգիս Այվազյան
Հեռ. 011 910-438

034/23783-17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594011 էլ. փոստ՝ artur.hovhannisyan@justice.am

20.06.17 N 02/14/10160-17

Ձեր N ____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի կատարումն ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 16-ի 15/15.1/14092-17 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի լաբորատոր փորձարկումներ» ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատարող՝ Անդրանիկ Ռաշիդյան,
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. /010/ 59 41 29

035/23571-17

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ

N 01/14.1/11042-17
«22» 06 2017 թ.

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ*
**պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ի պատասխան Ձեր 2017 թվականի հունիսի 16-ի N 15/15.1/14092-17 գրության տեղեկացնում եմ, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի լաբորատոր փորձարկումներ» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունեմ:

*Հարգանքով՝*

Վ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

*Կատարող՝ Ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության պետ՝ Ք. Քաքարյան 590044*
*Lus58*

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Նալբանդյան 28 Հեռ.՝ (374 10) 59 00 01 , Ֆաքս՝ (374 10) 56 05 28, էլ. փոստ՝ minister@mtc.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«19» 06 2017թ.
No 06/3-8/21183-17

Ձեր No ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 16.06.2017թ.
թիվ 15/15.1/14092-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի լաբորատոր փորձարկումներ» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

0414/23416-17

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի և սպասարկման վարչության ՀՎՍՀԿ
Արամայիս Բարսեղյան
Հեռ. 060544705

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57 կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

**ՆԱԽԱԳԻԾ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**հունիսի 2017 թվականի N Մ- -Ա**
**քաղ. Երևան**

**«ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի -ի N 01.1/14-2/ -17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի հունիսի -ի N 02/14/ -17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի հունիսի -ի N ՆՁ/22.2/ -17, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի հունիսի -ի N ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հունիսի -ի N 06/3-8/ -17 գրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մամիկոնյանց 30, ՀՎՀՀ՝ 00009237) իրականացվող՝ 405,000,000 դրամ արժողությամբ «Լսողության խնդիրներ ունեցող անձանց աջակցության տրամադրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ախտի Գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02581925) 2017 թվականի հունիսի 9-ին կնքված N 17060901 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունիսի 28-ից մինչև սեպտեմբերի 30-ը ԱՄՆ-ի Սթարկի լսողության հիմնադրամի բարեգործական առաքելության օժանդակ ծառայությունների մատուցում՝ 83,094,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետարան, Հայաստանի Հանրապետության Շիրակի Լոռու և Տավուշի մարզպետներին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԱՐԱԲԿԻՐ» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի

Տնօրեն՝ Ս. Մարգարյան [signature]

_____ հունիս 20__ թ.

«Լողության խնդիրներ ունեցող անձանց աջակցության տրամադրում»

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակները | - ՀՀ – ում սոցիալական բոլոր խմբերում ընդգրկված լսողական խնդիրներ ունեցող անձանց հայտնաբերում, անվճար հետազոտում, լսողական սարքի կարիքների գնահատում, համապատասխան սարքի անհատույց տրամադրում և հետագա խնամք:<br>- Ծրագիրն ընդգրկում է տարիքային և սոցիալական բոլոր խմբերի կարիքներ ունեցող անձանց:<br>- Այն կնպաստի նրանց կենսամակարդակի, առօրյա կյանքի ինքնուրույնության և արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև միջին տարիքի անձանց զբաղվածության ապահովմանը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | Բարեգործները | ՍԹԱՐԿԻ լսողության հիմնադրամ, ԱՄՆ<br>Հասցե՝ Twin Cities Office, 6700 Washington Ave. South. Eden Prairie, MN 55344, ԱՄՆ<br>Հեռախոս՝ + 1 866 354 32 54<br>Ֆաքս՝ +1 952 828 69 00 |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Արաբկիր» Միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ<br>Ք. Երևան, Մամիկոնյանց 30, ՀՎՀՀ՝ 00009237 |
| 5. | Ծրագրի | Ք. Երևան, ՀՀ Լոռու, Շիրակի, Տավուշի մարզեր բնագավառը՝ առողջապահություն, |

| | | |
|---|---|---|
| | իրականացման վայրը և բնագավառը | սոցիալական ապահովություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 411 միլիոն դրամ (ներառյալ կազմակերպական ծախսերը) |
| 7. | Բարեգործություն ստացողները | 2000 ՀՀ քաղաքացի /սոցիալական և տարիքային բոլոր խմբերից/ Շահառուները ընտրվել են մարզպետարանների և Սոցապ նախարարության հետ համատեղ |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագրի տևողությունը՝ 1 հունիսի 2017 թ. – 30 դեկտեմբեր 2017 թ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | *1-ին փուլ*<br><br>*28 հունիս – 7 հուլիս 2017թ. - 20 մլն դրամ*<br>- *Շիրակի, Լոռու, Տավուշի մարզերի և Երևան քաղաքի շահառուների տեղափոխում կենտրոնացված հաստատություն, որտեղ կիրականացվեն հետազոտման, ականջի ծեփվածքի գործողությունները, ներդիրների չափում, սնունդով ապահովում, Սթարկի հիմնադրամի մասնագետների և կամավորների կեցության ապահովում, տեղեկատվական նյութերի տպագրական աշխատանքներ, տեսանյութերի պատրաստում*<br><br>*2-րդ փուլ*<br>*20 սեպտեմբեր – 2 հոկտեմբեր 2017թ. - 85 մլն դրամ,*<br>- *Շիրակի, Լոռու, Տավուշի մարզերի շահառուների տեղափոխում Երևան, որտեղ կտեղադրվեն լսողական սարքերը, հետագա խնամքի ապահովում, Սթարկի հիմնադրամի հիմնադիր նախագահի մասնակցությամբ Հայաստանում ծրագրի ներդրման մեկնարկի պաշտոնական միջոցառման կազմակերպում, արտերկրից պատվավոր հյուրերի (թվով 40) ընդունում, կեցության ապահովում,տեսանյութերի պատրաստում,* |



| | | |
|---|---|---|
| | | - Բարեգործական բեռների (լսողական սարքեր, մարտկոցներ, ներդիրներ, բժշկական պարագաներ, սարքեր, լսողության ստուգման սարքեր) ներմուծում և անհատույց հատկացում , որոշ դեպքերում անսարք ապրանքների արտահանում<br>*Ծրագրի ողջ ընթացքում -* **300 մլն դրամ** |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող ) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | - Բարեգործական բեռների (լսողական սարքեր, մարտկոցներ, ներդիրներ, բժշկական պարագաներ, սարքեր, լսողության ստուգման սարքեր) ներմուծում և անհատույց հատկացում, որոշ դեպքերում անսարք ապրանքների արտահանում – 300 մլն դրամ (Ակնկալվում է հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների վճարումից ազատում )<br><br>- *Շիրակի, Լոռու, Տավուշի մարզերի և Երևան քաղաքի շահառուների, տեղափոխում կենտրոնացված հաստատություն, սնունդով ապահովում, Սթարկի հիմնադրամի մասնագետների , կամավորների կեցության ապահովում , Շիրակի, Լոռու, Տավուշի մարզերի շահառուների տեղափոխում Սթարկի հիմնադրամի հիմնադիր նախագահի մասնակցությամբ Հայաստանում ծրագրի ներդրման մեկնարկի պաշտոնական միջոցառման կազմակերպում, արտերկրից պատվավոր հյուրերի (թվով 40) և մասնագետների ընդունում, կեցության ապահովում – 101 մլն դրամ*<br><br>- *Տեղեկատվական նյութերի տպագրական աշխատանքներ, տեսանյութերի պատրաստում - 4 մլն դրամ* |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Նախատեսված բյուջեից 6.000.000 դրամ կազմակերպական ծախսեր (գրասենյակային ծախսեր, աշխատողների աշխատավարձ՝ թվով 6-8 աշխատող՝ 100.000 – 120.000 դրամ միջին աշխատավարձով) |

| | | |
|---|---|---|
| 12. | Համագործակցու-թյունը պետական կառավարման, տեղական ինքնակառավար-ման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագիրն իրականացվելու է, համագործակցելով ՀՀ Առողջապահության նախարարության, ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության, ՀՀ Կրթության և Գիտության նախարարության, Երևանի քաղաքապետարանի, ՀՀ Լոռու, Շիրակի, Տավուշի մարզպետարանների հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետու-թյան նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման ընթացքը վերահսկվում է հիմնադրամը ֆինանսավորող կազմակերպությունների կողմից, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից |

«Արաբկիր» ՄՄԲՀ տնօրեն՝ Սպարտակ Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

01.1/14-2/11092-17
20.06.17

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
16.05.2017թ. N 15/15.1/14074-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Լսողության խնդիրներ ունեցող անձանց աջակցության տրամադրում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ կից ներկայացված ծրագրի 9-րդ և 10-րդ կետերում նշված ծախսերի հանրագումարը (445,500,000 ՀՀ դրամ) չի համապատասխանում հիմնադրամի կողմից իրականացվող ընդամենը 405,000,000 ՀՀ դրամ արժողությամբ ծրագրի բյուջեին (ծրագրի 6-րդ կետում նշված է 405,000,000 դրամ՝ ներառյալ կազմակերպական ծախսերը), իսկ «Ախտի Գրուպ» ՍՊԸ-ի հետ 09.06.2017թ. կնքված N 17060901 պայմանագրում ծառայությունների մատուցման 83,094,000 ՀՀ դրամի չափով գործարքի գինը՝ ծրագրի 10-րդ կետում նշված կետում այդ նպատակի համար նախատեսված 82,000,000 ՀՀ դրամ ծախսին:

Ելնելով վերոգրյալից առաջարկում ենք վերախմբագրել կից ներկայացված ծրագիրը՝ ծրագրի 10-րդ կետում նաև արտացոլելով միայն այն ծախսերը, որոնք ենթադրում են

01/23602-17

կոնկրետ ապրանքների և ծառայությունների ձեռքբերման (ներմուծման) գործարքներ՝ իրենց համապատասխան արժեքներով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

մ. 8/2

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Սարգիս Այվազյան
Հեռ. 011 910-438

մ. 8/2

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594011 էլ. փոստ՝ artur.hovhannisyan@justice.am

20.06.17 N 02/14/10528-17

Ձեր N ____________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Ի կատարումն ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 16-ի 15/15.1/14074-17 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ ««Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Լսողության խնդիրներ ունեցող անձանց աջակցության տրամադրում» ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատարող՝ Անդրանիկ Ռաշիդյան,
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. /010/ 59 41 29

035/23643-17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Ար. 8/2

« 20 » 06 2017 թ. N ՎԱՄ/ՄԶԾՎ-2-1/6572-17

Ձեր 2017-06-16, 15/15.1/14074-17

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Քննարկելով ««Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Լսողության խնդիրներ ունեցող անձանց աջակցության տրամադրում» ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Կատարող՝ Միջազգային համագործակցության և
զարգացման ծրագրերի վարչություն 581-680

010/23624-17

**0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30**
http://www.mlsa.am info@mlsa.am

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Ար. 8/2

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 56 43 20
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ info@moh.am

20.06.17 N ՆԶ/22.2/7821-17
Ձեր N

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 2017 թվականի հունիսի 16-ի թիվ 15/15.1/14074-17 գրության՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Լսողության խնդիրներ ունեցող անձանց աջակցության տրամադրում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՆԵԼՍՈՆ ՁՈՒԼՈՅԱՆ

Կատարող՝ Նաիրա Փափախյան
Դեղորայքային քաղաքականության
և բժշկական տեխնոլոգիաների վարչություն
հեռախոս 52 27 21

020/23655-17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

21.8/2

«21» 06 2017թ.
No 06/3-8/21384-17
Ձեր No ______

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 16.06.2017թ.
թիվ 15/15.1/14074-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Լսողության խնդիրներ ունեցող անձանց աջակցության տրամադրում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկում ենք.

1. Ծրագրի 9-րդ և 10-րդ կետերում համապատասխանաբար տարանջատել ծրագրի իրականացման նպատակային ծախսերը կազմակերպական ծախսերից, մասնավորապես՝ ծրագրի տեղական համակարգողների կեցության ապահովման ծախսերը: Դրանք արդեն իսկ ներառված են ծրագրի 11-րդ կետում՝ որպես գործուղման ծախսեր:

2. Ծրագրի 11-րդ կետում մանրամասնել կազմակերպական ծախսերի կազմը և արժեքները: Մասնավորապես.

- 11-րդ կետում ամրագրել ծրագրում ներգրավված անձանց թվաքանակը և աշխատավարձի չափը,

- 11-րդ կետից հանել տրանսպորտային միջոցների շահագործման նպատակով իրականցվելիք ծախսերը՝ հաշվի առնելով, որ ծրագրի շահառուների, տեղական համակարգողների, կամավորների և Սթարկի հիմնադրամի մասնագետների

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57 կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

044/23788-17

տեղափոխումներն իրականացվելու են «Արտ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից՝ 09.06.2017թ-ին կնքված N 17060901 պայմանագրի համաձայն:

21.8/2

Հարգանքով՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ Վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎՍՀԿ
Նաիրա Բեժանյան
Հեռ. 060544705

«ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
"ARABKIR" UNITED CHILDREN'S CHARITY FOUNDATION
FONDATION D'ENTRAIDE PEDIATRIQUE UNIFIEE "ARABKIR"
ОБЪЕДИНЕННЫЙ ДЕТСКИЙ БЛАГОТВОРИТЕЛЬНЫЙ ФОНД "АРАБКИР"
ՀՀ, Երևան 0014, Մամիկոնյանց 30, Հեռ՝ (374 10) 28 55 98, Ֆաքս՝ (374 10) 28 41 70, Էլ. փոստ՝ arucef@arminco.com
30 Mamikoniants str., 0014 Yerevan, RA, Tel: (374 10) 28 55 98, fax : (374 10) 28 41 70, e-mail : arucef@arminco.com

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգող հանձնաժողովի
նախագահ
պարոն Ս. Տեր – Սիմոնյանին

22.06.2017թ.

Հարգելի պարոն Տեր - Սիմոնյան

Ի լրումն մեր կողմից 16.06.2017թ. No – 01 -ՍՀ – 43 նամակի, հաշվի առնելով ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի առաջարկությունները, Ձեզ ենք ներկայացնում ծրագրի լրամշակված տարբերակը:

Կանխավ շնորհակալ եմ:

Հարգանքով՝

«Արաբկիր» ՄՄԲՀ տնօրեն Ս. Ղազարյան

No – 01 -ՍՀ – 48
Կատարեց՝ Շուշան Դավթյան
Հեռ. 28.55.98

094-23975
22 06 17

# ՏԵՂԵԿԱՆՔ

«Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող **«Լսողության խնդիրներ ունեցող անձանց աջակցության տրամադրում»** ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարություն – 20.06.17, N 01.1/14-2/11092-17 | |
| Կից ներկայացված ծրագրի 9-րդ և 10-րդ կետերում նշված ծախսերի հանրագումարը (445,500,000 ՀՀ դրամ) չի համապատասխանում հիմնադրամի կողմից իրականացվող ընդամենը 405,000,000 ՀՀ դրամ արժողությամբ ծրագրի բյուջեին (ծրագրի 6-րդ կետում նշված է 405,000,000 դրամ՝ ներառյալ կազմակերպական ծախսերը), իսկ «Ախտի Գրուպ» ՍՊԸ-ի հետ 09.06.2017թ. կնքված N 17060901 պայմանագրում ծառայությունների մատուցման 83,094,000 ՀՀ դրամի չափով գործարքի գինը՝ ծրագրի 10-րդ կետում նշված կետում այդ նպատակի համար նախատեսված 82,000,000 ՀՀ դրամ ծախսին:<br>Ելնելով վերոգրյալից առաջարկում ենք վերախմբագրել կից ներկայացված ծրագիրը՝ ծրագրի 10-րդ կետում նաև արտացոլելով միայն այն ծախսերը, որոնք ենթադրում են կոնկրետ ապրանքների և ծառայությունների ձեռքբերման (ներմուծման) գործարքներ՝ իրենց համապատասխան արժեքներով: | Առաջարկությունները ընդունվել են: Կցված է ծրագրի լրամշակված տարբերակը<br>- |
| ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե– 21.06.17, N 06/3-8/21384-17 | |
| 1. Ծրագրի 9-րդ և 10-րդ կետերում համապատասխանաբար տարանջատել ծրագրի իրականացման նպատակային ծախսերը կազմակերպական ծախսերից, մասնավորապես՝ ծրագրի տեղական համակարգողների կեցության ապահովման ծախսերը:<br>2. Ծրագրի 11-րդ կետում մանրամասնել կազմակերպական ծախսերի կազմը և արժեքները: Մասնավորապես.<br>- 11-րդ կետում ամրագրել ծրագրում ներգրավված անձանց թվաքանակը և աշխատավարձի չափը,<br>- 11-րդ կետից հանել տրանսպորտային միջոցների շահագործման նպատակով իրականցվելիք ծախսերը՝ | Առաջարկությունները ընդունվել են: Կցված է ծրագրի լրամշակված տարբերակը |

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Լր. 8/13

---- ---------------- 2017 թվականի N Մ- -Ա
քաղ. Երևան

ԱՄՆ-ի «ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ԿՈՐՊՈՐԱՑԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՈՐ՝ «ՓԱՐԱՄԱԶ ԱՎԵՏԻՍՅԱՆ» ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի 2017 թվականի հունիսի 8-ի գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի 15-ի N 01.1/14-2/10761-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի հունիսի 16-ի N 02/14/10281-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունիսի 14-ի N 6/3-8/20779-17 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի «Ամերիկյան համալսարան» կորպորացիայի կողմից 2017 թվականի հուլիսի 1-ից մինչև 2061 թվականի հունիսի 30-ը (44 տարի) ընկած ժամանակահատվածում իրականացվող՝ 1,225,438,082 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամին ուսումնական նոր՝ «Փարամազ Ավետիսյան» մասնաշենքի անհատույց ժամանակավոր օգտագործման հանձնում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի կողմից (քաղ. Երևան, Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 01511187) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

ԱՄՆ-ի «Ամերիկյան համալսարան» կորպորացիայի հետ (300 Լեյքսայդ Դրայվ, 12-րդ հարկ, Օքլենդ,Կալիֆորնիա 94612) 2011 թվականի դեկտեմբերի 15-ին կնքված պայմանագրում (2017 թվականի մայիսի 11-ին կնքված համաձայնագրում) նշված գործարքը, որով նախատեսվում է անշարժ գույքի անհատույց ժամանակավոր օգտագործման հանձնում՝ 1,225,438,082 դրամ կադաստրային արժեքով:

3. «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Երևանի քաղաքապետին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստանի ամերիկյան համալսարան հիմնադրամ» կազմակերպության

Փոխնախագահ Աշոտ Ղազարյանի կողմից

«21» հունիսի, 2017թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՆՈՐ «ՓԱՐԱՄԱԶ ԱՎԵՏԻՍՅԱՆ» ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆՈՒՄ»

Ծ Ր Ա Գ Ի Ր

( Լ ր ա մ շ ա կ վ ա ծ )

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի հիմնական նպատակն է «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի (ՀԱՀՀ) տարածքի ընդլայնումը և շենքային պայմանների բարելավումը, որի արդյունքում անհրաժեշտ պայմաններ կապահովվեն ՀԱՀՀ-ի ընդլայնված կրթական և գիտահետազոտական ծրագրերի իրականացման համար:<br>ՀԱՀՀ-ի նոր մասնաշենքի օգտագործումը կնպաստի հետևյալ նպատակների իրականացմանը.<br>1. ՀԱՀ-ի շենքային պայմանների բարելավմանը՝ ժամանակակից սարքավորումներով հագեցած նոր լսարաններով, լաբորատորիաներով, գրադարաններով համալրման միջոցով,<br>2. ՀԱՀՀ-ի կողմից իրականացվող կրթական և գիտահետազոտական ծրագրերի ընդլայնմանը ինչպես Հայաստանում, այնպես էլ տարածաշրջանում,<br>3. Հայաստանի կրթական համակարգում առաջատար կրթական տեխնոլոգիաների ներմուծմանը,<br>4. Հայաստանի կրթական համակարգում օտարերկրյա ուսանողների լայնածավալ ընդգրկմանը,<br>5. ՀԱՀՀ-ի միջազգային հավատարմագրմանը և ճանաչմանը,<br>6. Հայաստանի և օտարերկրյա կրթական հաստատությունների կրթական առաջատար տեխնոլոգիաների փոխանակմանը և Հայաստանի միջազգային կապերի ընդլայնմանը կրթության և գիտության ոլորտում,<br>7. Հայաստանի տարածքում նորարական ճարտարագիտական լուծումների ներմուծմանը, մասնավորապես հետլարման ճոպանային ձգման սեյսմակայուն |

Լր. 8/13